ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԼՈՌԵ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փրկարարական ոլորտում փոխադարձ համագործակցության ապահովման ձգտումը.

Կարևորելով ուսանողների՝ պրակտիկ ոլորտում կարողությունների զարգացումը.

Ընդունելով Կողմերի պատրաստակամությունը համատեղ կրթական, գործնական միջոցառումների իրականացման, ուսանողների պրակտիկաների կազմակերպման, համատեքստում.

Հիմք ընդունելով սույն հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. Համագործակցության նպատակը

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Ինստիտուտը պատրաստակամ է փրկարարության ոլորտում պրակտիկ թեմաներն առաջարկել ուսանողներին՝ ամբիոններում և տեղերում հետազոտություններ իրականացնելու, իսկ «Լոռե փրկարարական ջոկատ» ՀԿ–ն (այսուհետ՝ Ջոկատ) պատրաստակամ է գործուն և առարկայական աջակցություն ցուցաբերել հետազոտություն իրականացնող Ինստիտուտի սովորողներին:

2.2 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.2.1 Ջոկատում ուսանողների պրակտիկաների կազմակերպման միջոցով,

2.2.2 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.2.3 նորարարական, ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.2.4 սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.2.5 Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման,

2.2.6 սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, Ջոկատի տարածքների, գույքի օգտագործման,

2.2.7 երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման,

2.2.8 համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու:

3. Համագործակցության սկզբունքները

Կողմերը սույն հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն հուշագիրը կնքվել է Ստեփանավան քաղաքում, 2020թ օգոստոսի 21-ին:

4.6 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ջոկատ	**Ինստիտուտ**
«Լոռե փրկարարական ջոկատ» ՀԿ	«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ
ք. Ստեփանավան, Անտառային 999	ք. Երևան, Ալեք Մանուկյան 11
Նախագահ՝ Արմեն Առաքելյան	Ռեկտորի ժ/պ՝ Դավիթ Խիթարյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.